

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պետրոսյան Հեղինե Գագիկի

**ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀՀ-ՈՒՄ**

**Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդվարդ Մարտինի Սանդոյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայկ Գերասիմի Մնացականյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Պավել Դանդոնի Սաֆարյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2019 թվականի ապրիլի 16-ին, ժամը 14⁰⁰-ին,
Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ
008 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թվականի մարտի 06-ին:

**008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար**

**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ի.Բ. Պետրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հարկային համակարգի արդյունավետ գործունեությունն ամեն մի երկրի գործարար միջավայրի զարգացման երաշխիքն է: Ընդ որում՝ յուրաքանչյուր պետություն կատարում է իր հարկային համակարգի ընտրությունը. մի կողմից այն չպետք է բեռ դառնա քաղաքացիների ու կազմակերպությունների համար, մյուս կողմից՝ պետք է ապահովի պետության եկամուտները հարկային մուտքերի մասով, որն էլ շատ երկրներում հանդիսանում է պետական բյուջեի համալրման հիմնական աղբյուրը: Ըստ էության, յուրաքանչյուր պետության առջև դրված է խնդիր. մշակել և ներդնել հարկային այնպիսի համակարգ, որը ոչ միայն կնվազեցնի ստվերային տնտեսության մակարդակն ու կրեբի հարկային եկամուտների աճի, այլ նաև կշահագրգռի քաղաքացիներին ու կազմակերպություններին աշխատելու թափանցիկ կերպով, կբարձրացնի նրանց վճարունակությունը, ներդրումների ավելացման հնարավորություններն ու կրեբի շահութաբերության աճի:

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բավականաչափ զարգացած և համապատասխանեցված է շուկայական հարաբերություններին, սակայն առկա են մի շարք խնդիրներ հարկային վարչարարությունում, հատկապես՝ ուղղակի հարկերի մասով, իսկ մեծ ոչ ֆորմալ հատվածի առկայությունն էլ ավելի է ազդում հարկային համակարգի արդյունավետության վրա և որպես արդյունք՝ բյուջեի համալրման վրա: Ուղղակի հարկերի վարչարարության լավագույն գործիքներից է ֆիզիկական անձանց եկամուտների ու գույքի հայտարարագրման համակարգը: Այս համակարգը ներդրված է բազմաթիվ զարգացած երկրներում, ինչպիսիք են՝ Մեծ Բրիտանիան, Դանիան, Գերմանիան, Ֆինլանդիան, Էստոնիան, ԱՄՆ և այլ: Այն գործնականում ապացուցել է իր արդյունավետությունը թե՛ որպես հարկերի հավաքագրման, թե՛ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք:

Հաշվի առնելով թեմայի արդիականությունը՝ թեկնածուականատենախոսության շրջանակներում կատարված միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկվում է ՀՀ-ում ներդնել ֆիզիկական անձանց եկամուտների ու գույքի հայտարարագրման համընդհանուր համակարգը, որը կնպաստի ուղղակի հարկերի հավաքագրմանը՝ հասցնելով նվազագույնի վարչարարական ծախսերը:

Այնուամենայնիվ, միայն եկամուտների ու գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրմամբ հնարավոր չէ հասնել վերոնշյալ նպատակներին: Այդ իսկ պատճառով հետազոտությունում ներկայացված է նաև ՀՀ ու այլ երկրների կազմակերպությունների շահույթի հարկման համակարգը, ուսումնասիրված են կազմակերպությունների չբաշխված շահույթը զրո տոկոս տոկոսադրույքով հարկելու միջազգային փորձը, ինչպես

նաև շահութահարկը վերացնելու, իսկ շահաբաժինները եկամտային հարկի հարկման օբյեկտ դարձնելու համակարգի ներդրման հեռանկարներն ու հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա:

Այսպիսով, սույն ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են ֆիզիկական անձանց եկամուտների ու գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի, ինչպես նաև կազմակերպությունների շահույթի հարկման նոր համակարգի ներդրման առավելություններն ու թերությունները, գնահատվել են դրանց արդյունավետությունն ու հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա, ՀՀ քաղաքացիների, կազմակերպությունների ու պետության համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է՝ արդյունավետ գործող եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրումը ՀՀ-ում: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Վերհանել եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգի էությունը, առանձնահատկություններն ու դրա կիրառման արդյունավետությունը:
- Ուսումնասիրել եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգի միջազգային փորձը:
- Վերլուծել ՀՀ-ում շահութահարկի ու եկամտային հարկի առանձնահատկությունները և իրականացնել համեմատական վերլուծություն նշված հարկատեսակների մասով ԵԱՏՄ և ԵՄ անդամ-երկրների հետ:
- Ներկայացնել հարկային ճեղքի էությունը և դրա հաշվարկման մեթոդներն ու սկզբունքները:
- Գնահատել ՀՀ-ում եկամտային հարկի հարկման բազայի ընդլայնման հնարավորությունը ստվերային տնտեսության կրճատման շնորհիվ:
- Վերլուծել եկամուտների և գույքի հայտարարագրման գործող համակարգը ՀՀ-ում՝ վերհանելով առկա խնդիրներն ու դրանց հետևանքները:
- Ներկայացնել կարգավորմամբ պայմանավորված «վարչարարական բեռի և օգուտների» հաշվակման («cost-benefit analysis») մեթոդիկան որպես կարգավորման ներդրման ազդեցության գնահատում, հաշվարկել եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգի ներդրման ծախսերը հանրային ու մասնավոր հատվածների համար:
- Հաշվարկել կազմակերպությունների շահույթի հարկման համակարգի փոփոխության հնարավոր ազդեցությունները ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն է ՀՀ-ում ուղղակի հարկման համակարգը, իսկ առարկան՝ բնակչության եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրումն ու ուղղակի հարկերի արդիականացումը ՀՀ-ում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության շրջանակներում կիրառվել են համընդհանուր գիտական մեթոդներ՝ անալիզ, սինթեզ, անալոգիա, մոդելավորում, համեմատական վերլուծություն, իրավագիտության հատուկ մեթոդներ՝ համեմատական-իրավական, իրավական մոդելավորման, ինչպես նաև տնտեսագիտության հատուկ մեթոդներ՝ գծապատկերների կազմման, ֆունկցիոնալ վերլուծության, վիճակագրական ու մաթեմատիկական մոդելավորման մեթոդները: Բացի այդ, հատուկ ուշադրություն է դարձվել Սոլոուի մոդելին, որը հիմնված է Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի վրա, հարկային ճեղքի և կարգավորմամբ պայմանավորված վարչարարական բեռի ու օգուտների գնահատման մոդելներին:

Հետազոտության տեղեկատվական հիմքերը: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել ու վերլուծվել են եկամուտների ու գույքի հայտարարագրման վերաբերյալ արտասահմանյան մասնագետների ուսումնասիրությունների հիմնական դրույթները, հայեցակարգերն ու մոտեցումները, կազմակերպությունների շահույթի հարկման, եկամտային հարկին նվիրված հետազոտությունները, հարկային ճեղքի հաշվարկման մեթոդները, առաջարկվող փոփոխությունների ազդեցությունների հաշվարկման մոդելները:

Հետազոտության իրականացման տեղեկատվական աղբյուր են հանդիսացել Համաշխարհային բանկի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձանժողովի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և այլ գերատեսչությունների, այլ երկրների վիճակագրական ծառայությունների ու ֆինանսների նախարարությունների պաշտոնական տվյալներն ու տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ, ԱՄՆ, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների իրավական ակտերը:

Հետազոտության գիտական նորույթները: Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթներն արտացոլված են հետևյալ հիմնական դրույթներում.

1. Մշակվել է եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրմամբ պայմանավորված ՀՀ-ում ուղղակի հարկման

համակարգի բարեփոխման հայեցակարգ՝ հիմնված շահութահարկի վերացման և եկամտային հարկի արդիականացման վրա:

2. Բացահայտվել է ստվերային տնտեսության կրճատմամբ պայմանավորված՝ ՀՀ բնակչության եկամտային հարկի հարկման բազայի ընդլայնման հնարավորությունը:
3. Մշակվել և հիմնավորվել է ՀՀ-ում շահութահարկի՝ իբրև հարկատեսակի վերացումը, ինչպես նաև գնահատվել է այդ փոփոխության ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա, ներդասական ընդհանուր հավասարակշռության դինամիկ մոդելի կիրառմամբ:
4. Մշակվել և փորձարկվել է ՀՀ-ում բնակչության եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգը և դրա ներդրման արդյունքում մասնավոր ու հանրային հատվածների վրա ազդեցությունների գնահատման մեխանիզմ՝ կարգավորմամբ պայմանավորված «վարչարարական բեռի ու օգուտների» գնահատման առաջարկվող մեթոդիկայով:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը դրսևորվում է եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի զարգացման, արդյունավետ հարկային վարչարարության և ՀՀ-ում կազմակերպությունների շահույթի հարկման նոր մոտեցմամբ: Հետազոտության շրջանակներում մշակվել է նաև եկամտային հարկի հարկման բազայի ընդլայնման մեթոդիկա, ներկայացվել է ցանկացած իրավական ակտի, առաջարկության կարգավորման ազդեցության գնահատման մեթոդիկան:

Գործնականում հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ օրենսդիր ու գործադիր իշխանությունների կողմից՝ ստվերային տնտեսության ու ոչ ֆորմալ հատվածի նվազեցմանը, ուղղակի հարկերով վարչարարության բարելավմանը, պետության բյուջեի հարկային եկամուտների ավելացմանը, բիզնես միջավայրի բարելավմանը, կազմակերպությունների ինքնաֆինանսավորման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման ու իրականացման ընթացքում: Ատենախոսության առաջարկությունները կարող են ներառվել ՀՀ կառավարության 2019 թվականի միջոցառումների ծրագրում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումը:

Հետազոտության ընթացքում կիրառված Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի ձևափոխված տարբերակն արդեն իսկ կիրառվել է էստոնիայում ու Վրաստանում կազմակերպությունների շահույթի հարկման համակարգի փոփոխության ազդեցությունները հաշվարկելիս: Իսկ կարգավորմամբ պայմանավորված վարչարարական բեռի ու օգուտների գնահատման մեթոդիկան ներդրվել է դեռևս 2013 թվականին «Օրենսդրության

կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից՝ ՀՀ-ում բիզնես գործընթացների ու առաջարկվող փոփոխությունների գնահատման իրականացման նպատակով: Այժմ այս մեթոդիկան կարգավորման ազդեցության գնահատման մեթոդաբանության բաղկացուցիչ մասն է: Սույն մեթոդիկան տեղայնացվել ու կիրառվել է բազմաթիվ ոլորտներում՝ հարկային, կրթության, սոցիալական, էներգետիկայի և այլ բնագավառներում: Հետազոտության հիմնական արդյունքները ներկայացվել ու քննարկվել են ՀՌՀ X (Երևան, 2015 թ.), XI (Երևան, 2016 թ.) և XII (Երևան, 2017 թ.) գիտական կոնֆերանսների ընթացքում, ինչպես նաև հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի հինգ գիտական հոդվածներում, որոնցից մեկն ընդգրկված է Scopus շտեմարանի գիտական հրատարակություններից մեկում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և 14 հավելվածներից: Ատենախոսության տեքստը, ներառյալ գրականության ցանկը և հավելվածները կազմում է համակարգչային 181 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, առաջադրվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, սահմանվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, մեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի գիտական նորույթները, ուղենշվել են ստացված արդյունքների տեսական ու գործնական կիրառման հնարավորությունները, ներկայացվել են դրանց փորձարկումն ու հրապարակումները, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Եկամուտների և գույքի հայտարարագրման էությունն ու դրա կիրառման միջազգային փորձը»** գլխում ուսումնասիրվել են եկամուտների և գույքի հայտարարագրման էությունն ու առանձնահատկությունները՝ որպես հարկերի հավաքագրման և կոռուպցիայի դեմ պայքարի գործիք, ներկայացվել է այս գործիքի արդյունավետությունն ու կիրառումը միջազգային փորձում:

Ներկայումս հայտարարագրման համակարգը ներդրված է բազմաթիվ զարգացած երկրներում, ինչպիսիք են՝ Մեծ Բրիտանիան, Դանիան, Գերմանիան, Ֆինլանդիան, Էստոնիան, ԱՄՆ և այլ: Հիմնվելով միջազգային փորձի վրա՝ կարելի է առանձնացնել հասարակ (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) և նախապես լրացված հայտարարագրեր (Շվեդիա, Ֆինլանդիա, Էստոնիա, Սլովենիա): Հասարակ հայտարարագրի դեպքում հայտարարատու

Ֆիզիկական անձը հայտարարագրում առկա տվյալները լրացնում է ինքնուրույն ու ներկայացնում համապատասխան մարմնին: Մինչդեռ նախապես լրացվածի դեպքում՝ հայտարարագրի տվյալների լրացման պարտականությունը դրված է լիազոր մարմնի վրա, որից հետո լիազոր մարմինն ուղարկում է հայտարարագիրը ֆիզիկական անձին, որպեսզի վերջինս ստուգի հայտարարագրում առկա տեղեկատվության ամբողջականությունն ու հավաստիությունը: Նշված հայտարարագրման համակարգը որոշ առանձնահատկություններով գործում է Շվեդիայում, Ֆինլանդիայում, Սլովենիայում, Էստոնիայում և այլ եվրոպական երկրներում: Ընդ որում, իրականացված հաշվարկների համաձայն՝ Սլովենիայի ֆինանսական վարչարարության մարմնի կողմից հայտարարագրի նախնական լրացման դեպքում հայտարարատուի ծախսած ժամանակը միջինում կազմում է 29.5 րոպե, որը 45% պակաս է, քան հայտարարագրի՝ հայտարարատուի կողմից ինքնուրույն լրացումն ու ներկայացումը: Տվյալ պարագայում որոշ չափով աճում են հանրային հատվածի ծախսերը, սակայն աճում է նաև հարկատուների բավարարվածության աստիճանը:

Եկամուտների և գույքի հայտարարագրման ամենազարգացած համակարգը գործում է ԱՄՆ-ում և պարունակում է տեղեկատվություն միայն եկամուտների և մասհանումների (օրինակ՝ մարված ուսանողական վարկերը, վճարված տույժերը, բիզնես սկսելու հետևանքով կատարված ծախսերը և այլն) մասով: Գույքի վերաբերյալ տեղեկատվությունն արդեն իսկ առկա է տեղեկատվական բազայում, և գործարքների կատարման ընթացքում փոփոխություններն անմիջապես մուտքագրվում են բազա: Հարկերի հավաքագրման ճշտգրտության համար ԱՄՆ եկամուտների կառավարման ծառայությունը յուրաքանչյուր տարի պատահականության սկզբունքով իրականացնում է ներկայացված հայտարարագրերի տվյալների ստուգում: Հայտարարագիրը համեմատվում է համանման այլ հայտարարագրերի հետ: Տարբերությունների ի հայտ գալու դեպքում այդ հայտարարագրերը ստուգում է աուդիտորը՝ անհրաժեշտության դեպքում սահմանվում է պատասխանատվություն: Հանդիսանալով հարկերի գումարների հաշվարկման և հավաքագրման հիմնական գործիք՝ օրենքում սահմանված ժամկետից ուշ հայտարարագիր ներկայացնելու, չներկայացնելու, կեղծ տվյալներով ներկայացնելու կամ հայտարարագիր ներկայացնելու, բայց սահմանված ժամկետներում հարկերը չվճարելու դեպքում ԱՄՆ օրենսդրությամբ նախատեսված են վարչական և (կամ) քրեական պատասխանատվություն:

¹ Klun M., «Pre-filled Income Tax Returns: Reducing Compliance Costs for Personal Income Taxpayers» // Financial Theory and Practice. 2009. No. 33. pp. 219-233.

ԵԱՏՄ անդամ-երկրներում ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգը դեռևս բավականաչափ զարգացած չէ, և առկա է բազում փոփոխությունների անհրաժեշտություն: Նշենք նաև, որ եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգը 2020 թվականից նախատեսվում է ներդնել Ղազախստանում:

Մեծ է նաև հայտարարագրման՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիքի դերը: Այսպես, Ռ. Մուխերջիի ու Օ. Գոկցեկուսի հետազոտությունում ուսումնասիրվել են 16 երկրներում եկամուտների և գույքի հայտարարագրման օրենսդրությունները և իրականացվել է օրենսդրական դրույթների և առկա կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի ցուցանիշի միջև համադրություն²: Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի ցուցանիշն այնքան բարձր է.

- որքան ավելի վաղ են ուժի մեջ մտել եկամուտների և գույքի հայտարարագրման պահանջի վերաբերյալ դրույթները,
- որքան ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսված հայտարարագրման պահանջների խախտման համար,
- որտեղ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ներկայացրած եկամուտների և գույքի հայտարարագրի իրականացումը է հանրության համար:

Առենախոսության երկրորդ՝ **«ՀՀ հարկային և եկամուտների ու գույքի հայտարարագրման համակարգերի հիմնահարցերը»** գլխում կատարվել է ՀՀ և ԵԱՏՄ անդամ-երկրների ուղղակի հարկային համակարգերի վերլուծություն և համադրություն, ներկայացվել են շահութահարկի և եկամտային հարկի առանձնահատկությունները, ուսումնասիրվել են շահութահարկի և եկամտային հարկի հարկային ճեղքի հաշվարկման մեթոդիկաները և գնահատվել է ստվերի կրճատման միջոցով ՀՀ բնակչության եկամտային հարկի բազայի հնարավոր ավելացումը, ինչպես նաև ներկայացվել է ՀՀ եկամուտների և գույքի հայտարարագրման գործող համակարգը:

Առհասարակ, շահութահարկի և եկամտային հարկի դերը տնտեսության մեջ մեծ է: Մասնավորապես, իրականացված էմպիրիկ հետազոտությունները ցույց են տալիս, որ ամենամեծ բացասական ազդեցությունը տնտեսական աճի վրա ըստ նվազման կարգի ունեն շահութահարկը, այնուհետև ֆիզիկական անձանց եկամուտների վրա դրվող հարկերը, ապրանքների վաճառքի կամ ծառայությունների մատուցման գնի մեջ մտնող («սպառման») հարկերը և

² Mukherjee R. and Gokcekus O., «Officials' Asset Declaration Laws: Do They Prevent Corruption?» // Global Corruption Report 2006. Transparency International, 2006. pp. 326-327.

գույքային այլ հարկեր³: Բացահայտվել է կոռելացիոն կապ շահութահարկի և տնտեսական աճի միջև, ըստ որի՝ շահութահարկի դրույքաչափի 10% նվազեցումը բերում է տնտեսական աճի ավելացմանը 0.6-1.8%՝ կախված այլ գործոնների ազդեցությունից⁴: Բացասական է շահութահարկի ազդեցությունը նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների վրա՝ շահութահարկի դրույքաչափի ավելացումը 1%-ով բերում է ՕՈՒՆ-ի նվազմանը 3.72%-ով⁵: Հաշվի առնելով այս բացասական ազդեցությունը՝ վերջին քսան տարվա ընթացքում շահութահարկի միջին տոկոսադրույքն աշխարհում նվազել է շուրջ 15 տոկոսային կետով:

ՀՀ հարկային համակարգի համար հիմնախնդիր է շահութահարկի և եկամտային հարկի վարչարարությունը, որոնց մասով առկա է բավականաչափ մեծ հարկային ճեղք: Համաձայն վիճակագրության՝ ՀՀ-ում 2016 թվականին եկամտային հարկի կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 6.5%, իսկ շահութահարկի հարաբերակցությունը ՀՆԱ-ին՝ 2.5%: Համեմատության համար նշենք, որ ԵՄ անդամ-երկրներում նույն ժամանակաշրջանի համար այս ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 9.3% և 2.6%: Ըստ էության, հարկային ճեղքն այն գումարն է, որն առաջանում է հաշվետու տարվա բյուջե վճարման ենթակա հարկերի և փաստացի ու ժամանակին վճարված հարկերի գումարի տարբերության չափով⁶: Այս գումարի բացահայտմանն են ուղղված նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող ստուգումները: 2015 թվականի ընթացքում պլանով իրականացված ստուգումների թիվը կազմել է 818, որից շահութահարկի օրենսդրական պահանջների խախտում հայտնաբերվել է 610 կազմակերպություններում կամ իրականացված պլանով ստուգումների 75% կազմակերպություններում: Բացահայտված հիմնական խախտումներն էին.

- հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցման ենթակա ծախսերի չափը,
- համախառն եկամտի չափը,
- համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումների իրականացումը,
- ամորտիզացիոն մասհանումների գումարի չափը և այլն:

³ Arnold J., «Do Tax Structures Affect Aggregate Economic Growth? Empirical Evidence from a Panel of OECD Countries» // ECO/WKP (2008) 51. OECD. October, 2008. P. 28. pp. 18-19.

⁴ Lee Y. and Gordon R., «Tax structure and economic growth» // Journal of Public Economics, Elsevier, vol. 89 (5-6), June, 2005. pp. 1027-1043.

⁵ OECD, «Tax Effects on Foreign Direct Investment: Recent Evidence and Policy Analysis» // OECD. Tax Policy Studies No. 17. 2007. pp. 12-23.

⁶ Toder E., «What Is the Tax Gap?» // Tax notes. Tax Analysts, Current and Quotable. October, 2007. pp. 1-12.

Պլանով իրականացված ստուգումների ընթացքում բացահայտվել են խախտումներ ՀՀ 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքի՝ աշխատանքային պայմանագրի կնքման և եկամտային հարկի վճարման մասերով, 90 կազմակերպություններում, ինչը կազմում է պլանով իրականացված ստուգումների բացահայտված խախտումների 11.0%: Չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգումների քանակը կազմել է 3277, որոնցից շուրջ 2518 կազմակերպություններում (76.8%) բացահայտվել են աշխատանքային պայմանագրի խախտման, աշխատողների գրանցման, եկամտային հարկի և սոցիալական վճարների վճարման խախտումներ:


Հիմնվելով մի շարք ցուցանիշների վրա՝ հեղինակը հաշվարկել է ՀՀ-ում ոչ ֆորմալ հատվածի առկայության հետևանքով պետական բյուջե չվճարվող հարկերի և վճարների գումարը: Հաշվարկների հիմքում ընկած է եկամտային հարկի հաշվարկման հիմնական մեթոդը՝ ամսական անվանական աշխատավարձը բազմապատկվում է ոլորտում առկա ոչ ֆորմալ վարձու աշխատողների թվի և եկամտային հարկի դրույքաչափով, այնուհետև բազմապատկվում է 12-ով՝ տարեկան չվճարված եկամտային հարկի գումարը պարզելու նպատակով (տես՝ աղյուսակ 1): Կատարված հաշվարկների համաձայն՝ չվճարված եկամտային հարկի գումարը 2016 թվականին՝ 44.5 միլիարդ ՀՀ դրամ է, որը կազմում է 2016 թվականին պետական բյուջեում եկամտային հարկով ստացված եկամուտների 13.4%, իսկ ընդհանուր հարկային եկամուտների մեջ՝ 4.0%, ինչը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Աղյուսակ 1

Ոչ ֆորմալ հատվածի կողմից չվճարված եկամտային հարկի գումարի հաշվարկ, 2016 թ.

Ցուցանիշ	Գյուղատնտեսության հատված	Բոլոր այլ հատվածներ, բացառությամբ գյուղատնտեսության	Ընդամենը
Եկամտային հարկի ամսական գումարի չափը մեկ աշխատողի համար (ըստ հատվածների)	28 082	43 557	71 640
Եկամտային հարկի ամսական գումարի չափը (ըստ հատվածների)	244 317 298	3 467 167 448	3 711 484 746
Եկամտային հարկի տարեկան գումարի չափը (ըստ հատվածների)	2 931 807 571	41 606 009 376	44 537 816 947

Աղբյուր՝ հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:



Գծապատկեր 1. Հարկային եկամուտներն ու ոչ ֆորմալ հատվածի առկայության հետևանքով չստացված եկամտային հարկի գումարը, 2015 և 2016 թթ.

Աղբյուր՝ հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

Ակնհայտ է, որ ՀՀ-ում շահութահարկն ու եկամտային հարկը ոչ արդյունավետ գործող հարկատեսակներ են, և այդ համակարգերի փոփոխության շնորհիվ հնարավոր կլինի բարձրացնել վերջիններիս մասով պետական բյուջե գանձվող գումարները: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի համակարգ, որը ոչ միայն կապահովի պետական բյուջեի եկամուտների հավաքագրման արդյունավետությունը, այլ նաև կերաշխավորի լավագույն պայմանները մասնավոր հատվածի համար և չի առաջացնի լրացուցիչ բեռ: Տվյալ նպատակներին հասնելու լավագույն լուծումներից է համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրումը, որը ներկայացված է առաջարկությունների մասում: Այդ նպատակով նախ և առաջ դիտարկվել է ՀՀ-ում գործող հայտարարագրման համակարգը:

Ներկայումս ֆիզիկական անձանց կողմից եկամուտների հայտարարագրի ներկայացումը կարգավորվում է ՀՀ հարկային օրենսգրքով, ըստ որի՝ այն պարագայում, երբ ֆիզիկական անձի կողմից ստացված եկամուտները չեն հաշվարկվում և պահվում հարկային գործակալի կողմից, եկամտային հարկի հաշվարկը, պահումը և պետական բյուջե վճարումն իրականացնելու պարտականությունը դրված է ֆիզիկական անձի վրա: Պարտականությունների կատարման համար սահմանված են մի շարք ժամանակատար գործընթացներ.

1. ֆիզիկական անձի կողմից հարկ վճարողի հաշվառման համարի ձեռք բերումը,
2. էլեկտրոնային ստորագրության ձեռք բերումը,


3. նույնականացման քարտի ճանաչման սարքի ձեռք բերումը,
4. հաշվետվության լրացումը,
5. հարկի պետական բյուջե վճարումը:

Նշված գործողություններից յուրաքանչյուրը բաղկացած է առանձին ընթացակարգերից, որոնք տևում են 4-19 աշխատանքային օր: Արդյունքում ֆիզիկական անձի կողմից մեկ հաշվետվության լրացումն ու հարկի մուծումը բարդացված և ժամանակատար ընթացակարգ է: Համապատասխանաբար, հարց է առաջանում, արդյո՞ք նման համակարգը նպաստում է ֆիզիկական անձանց կողմից ստացված եկամուտները հայտարարագրելուն:

ՀՀ օրենսդրությունում առկա են մի շարք բացեր նաև պաշտոնատար անձանց կողմից գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգում: Սույն համակարգը կարգավորվում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք) և մի շարք ՀՀ կառավարության որոշումներով: Հայտարարագրման սուբյեկտ են հանդիսանում ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձինք, պետական համակարգում աշխատող մի շարք այլ պաշտոնատար անձինք, նրանց ամուսինները և ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք: ՀՀ օրենսդրության վերլուծությունից կարելի է առանձնացնել գույքի և եկամուտների հայտարարագրերի հետևյալ տեսակները.


- հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագիր,
- հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին տարեկան հայտարարագիր,
- հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիր,
- շահերի հայտարարագիր:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված են յուրաքանչյուր հայտարարագրի ներկայացման ժամկետներն ու ձևերը: Տվյալ գործիքի արդյունավետության գնահատման նպատակով, ատենախոսությունում դիտարկվել են մի շարք ցուցանիշներ: 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային ռեեստրում հաշվառված են եղել 763 բարձրաստիճան պաշտոնատար և 1027 փոխկապակցված անձինք: 2016 թվականի ընթացքում ներկայացված հայտարարագրերի թիվը կազմել է 2091, որոնցից 459 ներկայացվել է Օրենքում սահմանված ժամկետից ուշ, ինչը 2015 թվականի ընթացքում սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թվի հետ համեմատ աճել է 182-ով (տես՝ գծապատկեր 2): 2016 թվականի ընթացքում չներկայացված հայտարարագրերի թիվը եղել է 45 (տես՝ գծապատկեր 3):



Գծապատկեր 2. Սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտարարագրերի թիվը ըստ տեսակի, 2014-2016 թթ.

Աղբյուր՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով. «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2012-2016 թթ. գործունեության հաշվետվություններ», Երևան, 2017 թ., էջ 11:



Գծապատկեր 3. Չներկայացված հայտարարագրերի թիվը ըստ տեսակի, 2014-2016 թթ.

Աղբյուր՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով. «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2012-2016 թթ. գործունեության հաշվետվություններ», Երևան, 2017 թ., էջ 12:

Մինչև 2017 թվականի հունիսի 9-ի Օրենքում կատարված փոփոխությունները հայտարարագրման համակարգի հիմնախնդիրներից էր այն, որ ՀՀ օրենսդրությամբ հայտարարագիր չներկայացնելը, կամ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելը, կամ ակնհայտ կեղծ տեղեկատվությամբ ներկայացնելը չի առաջացրել պատասխանատվություն պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց համար: Ուստի, հասկանալի է դառնում այն հանգամանքը, թե ինչու հայտարարագրերի 23.5% ներկայացվել է Օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ: Միաժամանակ, պատասխանատվության առկայությունն իր անմիջական ազդեցությունն ունի օրենքի կիրարկման վրա:

Մեկ այլ հիմնախնդիր է հայտարարագրերում ներկայացված տեղեկատվության հավաստիությունը: ՀՀ կառավարության 2015 թվականի

փետրվարի 19-ի N 145-Ն որոշմամբ Էթիկայի հանձնաժողովն ունի մուտք դեպի համապատասխան տեղեկատվական համակարգեր (էլեկտրոնային շտեմարաններ)՝ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի: Չնայած կատարված փոփոխությանը՝ դեռևս չի գրանցվել ոչ հավաստի տեղեկատվությամբ տրամադրված հայտարարագիր: Բաց է մնում նաև հայտարարագրերում ներկայացվող այլ տեղեկատվության ստուգման հնարավորությունը, մասնավորապես, հանձնված կամ վերադարձված փոխառությունների, եկամուտների, իրականացված ներդրումների վերաբերյալ: Առաջանում է նաև հայտարարատու պաշտոնատար անձի կողմից այլ երկրում ունեցած գույքի և եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը պարզելու խնդիրը: Հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերում արտացոլված չեն իրենց փաստացի պատկանող, սակայն այլ անձանց (ոչ փոխկապակցված) անունով իրավաբանորեն ձևակերպված գույքն ու եկամուտները, որոնք նույնպես ոչ մի կերպ չեն ստուգվում:

Վերլուծելով հայտարարագրման համակարգը ՀՀ-ում՝ ակնհայտ է, որ այն, չնայած առկա օրենսդրությանը, կրում է ֆորմալ բնույթ և ուղղված չէ լուծելու որևէ խնդիր, մինչդեռ հայտարարագրման էությունը դրսևորվում է միայն այն դեպքերում, երբ այն գործում է որպես եկամուտների հավաքագրման, իսկ պաշտոնատար անձանց դեպքում՝ նաև կոռուպցիայի դեմ պայքարի գործիք:

Աշխատանքի երրորդ՝ **«ՀՀ-ում շահութահարկի և եկամուտների ու գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգերի փոփոխման կարգավորման ազդեցության գնահատումը»** գլխում քննարկվել են կազմակերպությունների շահույթի հարկման համակարգի փոփոխության հնարավոր ազդեցությունները ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա, ինչպես նաև ատենախոսությունում ներկայացված բոլոր առաջարկությունների ներդրման ազդեցությունը ՀՀ մասնավոր և հանրային հատվածների վրա՝ կարգավորմամբ պայմանավորված «վարչարարական բեռի ու օգուտների» հաշվարկման մեթոդիկայով:

Հաշվի առնելով շահութահարկի բացասական ազդեցությունը տնտեսության վրա, ՀՀ-ում շահութահարկի մասով առկա բազում խախտումներն ու միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ ատենախոսությունում առաջարկվել է վերացնել շահութահարկը ՀՀ-ում, իսկ իրավաբանական անձանց կողմից բաշխած շահաբաժինները դարձնել եկամտային հարկի հարկման օբյեկտ՝ ըստ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված եկամտային հարկի դրույքաչափերի: Տվյալ համակարգը որոշ առանձնահատկություններով արդեն իսկ ներդրվել է էստոնիայում, Վրաստանում և Լատվիայում: Այդ փոփոխությունների ազդեցության գնահատումը մակրոտնտեսական ցուցանիշների վրա

իրականացվել է նեոդասական ընդհանուր հավասարակշռության դինամիկ մոդելով՝ բացված տեսքով: Այն նման է Funke M. և Strulik H. կողմից մշակված մոդելին⁷, սակայն ներկայացված է դիսկրետ ժամանակով՝ Masso J. և Meriküll J. աշխատության մեջ⁸: Էստոնիայի և Վրաստանի կազմակերպությունների շահույթի հարկման համակարգերում փոփոխությունների ազդեցությունները նույնպես կանխատեսվել են նշված մոդելի հիման վրա, ինչը հնարավորություն է ընձեռում ստանալու համադրելի արդյունքներ և հաստատելու այդ մեթոդի արդյունավետությունը: Մոդելն իրենից ներկայացնում է Սոլոուի մոդելը ձևափոխված տեսքով, որտեղ հիմնական ցուցանիշներն են մեկ շնչին ընկնող սպառման (c^*) և մեկ միավոր աշխատուժին ընկնող կապիտալի (k^*) արժեքները.

$$c^* = (1 - g - \alpha\beta)k^{*\alpha-1} - \delta(1-\beta) - \gamma\left(\frac{\phi - \beta}{\phi}\right)$$

$$k^* = (\phi\alpha / ((1-m)r^f + \phi\delta))^{1/1-\alpha}$$

Հաշվի առնելով, որ մոդելը կիրառվում է կայուն տնտեսության համար, ուստի $A=1$, իսկ $k^*=K/A$, որից էլ բխում է, որ մեկ միավոր աշխատուժին ընկնող կապիտալի արժեքը համարժեք է կապիտալի արժեքին: Սպառման արժեքը՝ C , գտնելու համար անհրաժեշտ է կիրառել $c^*=C/K$, բանաձևը, իսկ թողարկման ծավալի՝ Y_t համար՝ $Y_t = K_t^\alpha A_t^{1-\alpha}$: Նշենք, որ հարկի դրույքաչափի փոփոխությունն արտահայտող ցուցանիշն է ϕ -ն, որն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝ $\phi = \frac{(1-\tau)}{(1-\alpha)}$: Տվյալ բանաձևերում g -ն՝ պետության սպառման կշիռն է թողարկման մեջ, α -ն՝ կապիտալի կշիռը, β -ն՝ ոչ ռեզիդենտների տիրապետման տակ գտնվող կապիտալի կշիռը, δ -ն՝ միջանկյալ փոխարինման մակարդակը, γ -ն՝ գիտատեխնիկական առաջընթացի տեմպը, m -ը՝ եկամտային հարկի տոկոսադրույքը, τ -ն՝ շահութահարկի տոկոսադրույքը, r^f -ը՝ տոկոսադրույք, z -ը՝ անմիջապես դուրս գրվող ներդրումների կշիռը:

Այսպիսով, համաձայն ներկայացված մոդելով իրականացված հաշվարկների, շահութահարկը հանելը, իսկ բաշխված շահաբաժինները եկամտային հարկի հարկման օբյեկտ դարձնելը ՀՀ-ում կհանգեցնի հետևյալ փոփոխությունների.

- ✓ թողարկման աճ 1.18%-ով,
- ✓ մասնավոր հատվածի սպառման մակարդակի աճ 0.5%-ով,

⁷ Funke M. and Strulik H., «Taxation, growth and welfare: Dynamic effects of Estonia's 2000 income tax act» // Bank of Finland. Institute for Economics in Transition, BOFIT. Discussion Papers No. 10. 2003. P. 24: Էջեր 11-21:


⁸ Masso J. and Meriküll J., «Macroeconomics effects of zero corporate income tax on retained earnings» // Baltic Journal of Economics No. 11 (2). 2011. pp. 81-99: Այսուհետ՝ Masso J., Meriküll J. (2011):

- ✓ կապիտալի աճ 2.64%-ով,
- ✓ զուտ ներդրումների աճ 1.9%-ով,
- ✓ պետության հարկային եկամուտների նվազում 3.38%-ով:

Պետության հարկային եկամուտների նվազումն առաջին տարիների ընթացքում հնարավոր կլինի թեթևացնել եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրմամբ, որն իր հերթին կնպաստի հարկային եկամուտների ավելացմանը եկամտային հարկի մասով (տես՝ ստորև ներկայացված հաշվարկները): Սպասվում է, որ տվյալ բարեփոխումը կբերի հարկային համակարգում կոռուպցիայի մակարդակի կրճատմանը: Բացի այդ, շահութահարկի համակարգի վերացմամբ հնարավոր կլինի խուսափել կազմակերպությունների շահույթի հարկման ավանդական համակարգի թերություններից: Այսպես, կազմակերպությունների համար կնվազեն օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ պահանջներ, ինչպիսիք են՝ ավանսային վճարների իրականացման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման, մաշվածքի նորմայի հաշվարկման և ներկայացվող այլ պահանջներ: Այս համակարգը հեշտ է և թափանցիկ, նպաստում է ներդրումների ավելացմանն ու նվազեցնում է կազմակերպությունների շահագրգռվածությունը թաքցնելու իրենց շահույթը:

Միաժամանակ, եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգի ներդրումը ենթադրում է մի շարք փոփոխություններ գործող կարգավորումների մեջ, որոնք կբերեն քաղաքացիների, կազմակերպությունների և պետության ծախսերի ու օգուտների փոփոխությանը: Տվյալ ազդեցությունները գնահատելու նպատակով ատենախոսության շրջանակներում կիրառվել է կարգավորման ազդեցության գնահատման մեթոդաբանության շրջանակներում կիրառվող ծախսերի և օգուտների հաշվարկման մեթոդիկան: Ինչպես տնտեսվարող սուբյեկտները, այնպես էլ պետական կառույցները կարգավորման հետևանքով կրում են ծախսեր և օգուտներ, ըստ որի էլ տարբերակվում են կարգավորմամբ պայմանավորված ծախսերի և օգուտների հաշվարկները՝ մասնավոր և հանրային հատվածների համար, ինչը ներկայացված է գծապատկեր 4-ում:

Մեթոդիկայի շրջանակներում երկու հատվածների ծախսերի հաշվարկման սկզբունքը նույնն է. հաշվարկվում են ընթացիկ ծախսերը և կապիտալ ծախսերը, սակայն, հաշվի առնելով մասնավոր հատվածի առանձնահատկությունները, դիտարկվում է նաև կարգավորման անարդյունավետության հետևանքով բիզնեսի կողմից չստացված եկամուտը (տես՝ գծապատկեր 5):



Գծապատկեր 4. Հարգավորմամբ պայմանավորված ծախսերի և օգուտների սխեմա

Աղբյուր՝ կազմված է հեղինակի կողմից:

Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Հստակացված եկամուտ
• պարտադիր պահանջվող տեղեկատվության լրացման վրա ծախսվող աշխատուժի ծախսեր. • վճարներ և (կամ) տուրքեր.	• ձեռք բերված ապրանքների կապիտալ արժեք. • պահպանման ծախսեր՝ սարքավորումների պահմանման, վերանայման և թարմացման ծախսեր.	• կազմակերպությունների կողմից գործունեության մեկնարկի կամ նոր ծառայությունների մատուցման ուղացման հետևանքով չստացված շահույթ.


Գծապատկեր 5. Հարգավորմամբ պայմանավորված ծախսերի դասակարգում

Աղբյուր՝ կազմված է հեղինակի կողմից:

Մեթոդիկայում բիզնես գործընթացի բոլոր քայլերը հաշվի են առնվում, և ծախս առաջացնելու դեպքում դրանք ստանում են դրամական արտահայտություն, ընդ որում, ժամանակի ծախսերը նույնպես ստանում են դրամական արտահայտություն՝ աշխատավարձի և պահպանման ծախսերի միջոցով: Որպեսզի հնարավոր լինի իրականացնել համեմատական վերլուծություն, ծախսերի և օգուտների հաշվարկները կատարվում են ինչպես ելակետային տարբերակի համար (տարբերակ 2)՝ ներկա (գործող) գործընթացի իրականացման ծախսերը և առաջացող օգուտներն առանց որևէ փոփոխության, այնպես էլ առաջարկվող տարբերակի համար (տարբերակ 1): Վերջնական արդյունքները ստանալուց հետո իրականացվում է տվյալ տարբերակների ծախսերի և օգուտների համադրություն և ընտրվում լավագույնը՝ նվազագույն ծախսեր ու առավելագույն օգուտ պարունակող տարբերակը: Աշխատությունում

ներկայացված մեթոդիկայի կիրառմամբ՝ ստացել են գծապատկերներ 6-8-ում և աղյուսակ 2-ում ներկայացված արդյունքները:


Մասնավորապես, գծապատկեր 6-ում ներկայացված է, որ մասնավոր և հանրային հատվածների ծախսերն առաջարկվող տարբերակում ավելանում են 11.6%-ով՝ ի համեմատ գործող տարբերակի:



Գծապատկեր 6. Մասնավոր և հանրային հատվածների ծախսերի համադրություն (տարբերակ 1 և 2)

Աղբյուր՝ կազմված է հեղինակի կողմից՝ համաձայն կատարված հաշվարկների արդյունքների:


Միաժամանակ, առաջարկվող տարբերակի ընդունման դեպքում մասնավոր հատվածի օգուտներն աճում են մոտ երկու անգամ՝ դառնալով 976245.9 միլիոն ՀՀ դրամ՝ գործող 459890.8 միլիոն ՀՀ դրամի փոխարեն (տես՝ գծապատկեր 7):



Գծապատկեր 7. Մասնավոր հատվածի օգուտների համադրություն (տարբերակ 1 և 2)

Աղբյուր՝ կազմված է հեղինակի կողմից՝ համաձայն կատարված հաշվարկների արդյունքների:

Հանրային հատվածի օգուտներն առաջարկվող տարբերակում նույնպես աճում են 11.7%-ով՝ կազմելով 513723.5 միլիոն ՀՀ դրամ՝ ի համեմատ գործող տարբերակի 459890.8 միլիոն ՀՀ դրամի (տես՝ գծապատկեր 8):



Գծապատկեր 8. Հանրային հատվածի օգուտների համադրություն (տարբերակ 1 և 2)

Աղբյուր՝ կազմված է հեղինակի կողմից՝ համաձայն կատարված հաշվարկների արդյունքների:

Հաշվարկների արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Կարգավորման ազդեցության գնահատմամբ պայմանավորված ծախսերի
և օգուտների հաշվարկ մասնավոր ու հանրային հատվածների համար,
հաշվարկների ամփոփում

	Ծախսեր		Օգուտներ	
	Մասնավոր հատված	Հանրային հատված	Մասնավոր հատված	Հանրային հատված
Տարբերակ 1	517 148 552 947	26 603 052	976 245 848 820	513 723 525 907
Տարբերակ 2	462 905 499 873	403 991 700	459 890 800 000	459 890 800 000

Աղբյուր՝ կազմված է հեղինակի կողմից՝ համաձայն կատարված հաշվարկների արդյունքների:

Համաձայն իրականացված հաշվարկների՝ ատենախոսությունում ներկայացված համակարգային փոփոխությունները կբերեն մասնավոր և հանրային հատվածների օգուտների աճին (տես՝ աղյուսակ 2): Ուստի, ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները հիմնավորված են ու վերջիններիս կիրառումը կհանգեցնի նշանակալի օգուտների:

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների արդյունքներն ու դրանց հիման վրա մշակված առաջարկությունները, որոնք ընդհանրացվել են **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում, կարելի է ներկայացնել հետևյալ հիմնական դրույթներով.

- Հայտարարագրման համակարգը հանդիսանում է հարկման ենթակա եկամուտների մասին տեղեկատվության տրամադրման հիմնական գործիք՝ եկամտային հարկի, շահութահարկի և այլ հարկատեսակների վճարման ենթակա գումարի չափի որոշման համար: Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ԱՄՆ եկամուտների և գույքի հայտարարագրերը հանդիսանում են միակ և լավագույն գործիքը հարկերի հավաքագրման համար, որը պայմանավորված է ճկուն ու մանրակրկիտ մշակված համակարգի առկայությամբ, հարկման չենթակա ծախսերի դուրսգրման ներկայացման և օրենսդրական պահանջների չկատարման դեպքում համարժեք պատժի ենթարկելու կայացած մեխանիզմներով: Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ եվրոպական մի շարք երկրներում այս համակարգն ունի լրացնող ու ճշգրտող դեր, արդյունքում արդեն իսկ լրացված հայտարարագիրն ուղարկվում է ֆիզիկական անձին վերջինիս եկամուտների ամբողջականությունը հաստատելու նպատակով:
- ՀՀ-ում ֆիզիկական անձանց կողմից եկամուտների հայտարարագիր ներկայացնելը սահմանված է ՀՀ հարկային օրենսգրքով: Այն պարագայում, երբ ֆիզիկական անձի կողմից ստացված եկամուտները չեն հաշվարկվել և պահվում հարկային գործակալի կողմից,

եկամտային հարկի հաշվարկը և պետական բյուջե վճարում իրականացնելու պարտականությունը դրված է ֆիզիկական անձի վրա: Նշված գործողությունների իրականացման համար սահմանված են մի շարք ժամանակատար գործընթացներ, որոնք տևում են 4-19 աշխատանքային օր և պահանջում ֆինանսական ռեսուրսներ: Արդյունքում ֆիզիկական անձի կողմից մեկ հաշվետվություն լրացնելը և հարկ մուծելը բարդացված և ժամանակատար ընթացակարգ է:

- ՀՀ-ում գործում է նաև գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք՝ հայտարարատու են հանդիսանում պաշտոնատար անձինք: 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ էլեկտրոնային ռեստորում հաշվառված են եղել 763 բարձրաստիճան պաշտոնատար և 1027 փոխկապակցված անձինք: Նույն ժամանակաշրջանում ներկայացված հայտարարագրերի թիվը կազմել է 2091, որոնցից 459 ներկայացվել է օրենքում սահմանված ժամկետից ուշ, իսկ չներկայացված հայտարարագրերի թիվը՝ 45 է:
- Վերլուծելով հայտարարագրման համակարգը ՀՀ-ում՝ ակնհայտ է, որ այն, չնայած առկա օրենսդրությանը, կրում է ֆորմալ բնույթ և ուղղված չէ հասնելու որևէ արդյունքի, մինչդեռ հայտարարագրման էությունը դրսևորվում է միայն այն դեպքերում, երբ այն գործում է որպես եկամուտների հավաքագրման, իսկ պաշտոնատար անձանց դեպքում՝ նաև կոռուպցիայի դեմ պայքարի գործիք:
- Առենախոսությունում իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում շահութահարկի և եկամտային հարկի մասով պետական բյուջե հավաքագրվող գումարն ամբողջական չէ՝ առկա ոչ ֆորմալ հատվածի, կազմակերպությունների կողմից եկամուտները թաքցնելու, ոչ արդյունավետ վարչարարության և այլ պատճառներով:
- Առաջարկվում է հանել ՀՀ-ում գործող շահութահարկի համակարգը, փոխարենը բաշխված շահաբաժինները դարձնել եկամտային հարկի հարկման օբյեկտ՝ ՀՀ-ում եկամտային հարկով սահմանված դրույքաչափերով: Նշված փոփոխությունների իրականացմամբ կնվազի սովերային տնտեսությունը, կազմակերպությունների դրդապատճառները թաքցնելու իրենց եկամուտները, ինչպես նաև կթեթևանան հարկային պարտավորությունները վերջիններիս համար, իսկ բազում հարկային ստուգումների իրականացման անհրաժեշտությունն ու կոռուպցիոն մեխանիզմներն այդ ստուգումների ընթացքում կվերանան՝ պարզեցնելով նաև հարկային վարչարարությունը պետության համար:

- Համաձայն իրականացված հաշվարկների՝ շահութահարկի վերացումը, իսկ բաշխված շահաբաժինները եկամտային հարկի հարկման օբյեկտ դարձնելը ՀՀ-ում կհանգեցնի թողարկման, մասնավոր հատվածի սպառման մակարդակի, զուտ ներդրումների և կապիտալի աճի, սակայն պետության հարկային եկամուտները կնվազեն:
- Առաջարկվում է ներդնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց ծախսերի հայտարարագիր, ինչպես նաև սահմանել, որ շահերի բախման հայտարարագիր ներկայացնեն նաև հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք:
- Առաջարկվում է ներդնել ռիսկի վրա հիմնված ստուգումներ: Այսպես, յուրաքանչյուր տարի իրականացնել պատահականության սկզբունքով ընտրված պաշտոնատար անձանց 10% հայտարարագրերի ամբողջական ստուգում: Եթե հայտարարագրում նշված տեղեկատվությունը թերի է կամ բացահայտվում են կեղծ կամ թերի տվյալներ, ապա պատասխանատվության ենթարկվելուց հետո հաջորդ տարի այդ անձի հայտարարագիրը ստուգվում է կրկին:
- Առաջարկվում է ներդնել բնակչության եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգ, ընդ որում, իրականացնել այն ըստ հետևյալ փուլերի՝ առաջին փուլում հավաքագրել ամբողջական տեղեկատվություն ֆիզիկական անձանց գույքի վերաբերյալ, իսկ երկրորդ փուլում ներդնել տարեկան եկամուտների հայտարարագրման համակարգը:
- Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները՝ ՀՀ-ում եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրումը, պաշտոնատար անձանց դեպքում նաև ծախսերի հայտարարագրումը, ինչպես նաև շահութահարկի վերացումը և բաշխված շահաբաժինները եկամտային հարկի հարկման օբյեկտ դարձնելը կբերեն համակարգային փոփոխությունների ՀՀ-ում, որի գնահատականը տրված է ատենախոսությունում: Մասնավորապես, ըստ իրականացված հաշվարկների՝ քաղաքացիների և կազմակերպությունների կողմից բիզնես գործընթացներով անցնելու ծախսերը կավելանան գործող կարգավորումների հետ համեմատած 11.7%-ով կամ 54243.1 միլիոն ՀՀ դրամով՝ դառնալով 517148.6 միլիոն ՀՀ դրամ գործող 462905.5 միլիոն ՀՀ դրամի փոխարեն: Մասնավոր հատվածի ծախսերի աճը նախ և առաջ պայմանավորված է ստվերային տնտեսության կրճատմամբ, որի հետևանքով ավելանում են պետությանը վճարվող հարկերի գումարների չափը: Ի տարբերություն մասնավոր հատվածի, համակարգային փոփոխություններն իրականացնելուց հետո

պետության ծախսերը կտրուկ նվազում են, մոտ 15 անգամ, դառնալով 26.6 միլիոն ՀՀ դրամ՝ գործող 403.9 միլիոն ՀՀ դրամի փոխարեն: Ծախսերի այսպիսի կտրուկ նվազումը պայմանավորված է հարկային վարչարարության կրճատմամբ՝ կազմակերպություններում իրականացվող ստուգումների անհրաժեշտության նվազմամբ: Միաժամանակ, մասնավոր հատվածի օգուտները կաճեն մոտ կրկնակի՝ դառնալով 976245.9 միլիոն ՀՀ դրամ՝ գործող 459890.8 միլիոն ՀՀ դրամի փոխարեն: Հանրային հատվածի օգուտների աճն առաջարկվող տարբերակում 11.7% է կամ 53832.7 միլիոն ՀՀ դրամ՝ կազմելով 513723.5 միլիոն ՀՀ դրամ, ի համեմատ գործող տարբերակի՝ 459890.8 միլիոն ՀՀ դրամի, որը պայմանավորված է ծախսերի նվազմամբ, ինչպես նաև վճարվող հարկային գումարների ավելացմամբ: Այսպիսով, ներկայացված առաջարկությունների ընդունումը հիմնավորված է և արդյունավետ:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Петросян Е. Г. «Гармонизация налоговых законодательств в условиях глобализации (на примере ЕС)» // Журнал «Вестник Института экономики Российской Академии Наук». №5, Москва, 2016. ISSN 2073-6487, стр. 191-202.
2. Петросян Е. Г. «Пути гармонизации систем налогообложения в странах ЕАЭС» // Журнал «Экономическая политика». Т. 11. № 6. Москва, 2016. ISSN 1994-5124. (**Scopus**), стр. 222-241.
3. Петросян Е. Г. «Налог на прибыль организаций в Армении: проблемы и перспективы» // «Десятая Годичная научная конференция РАУ (30 ноября – 4 декабря 2015 г.). Сборник научных статей: Социально-гуманитарные науки. Часть III». Изд. РАУ, Ереван, 2016. ISBN 978-9939-67-171-0, стр. 136-144.
4. Հ. Գ. Պետրոսյան «Գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը Հայաստանի Հանրապետությունում՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործիք» // «Ֆինանսներ և էկոնոմիկա» ամսագիր, #9-10 (205-206), Երևան, 2017: ISSN 1829-3689, էջեր 136-141:
5. Հ. Գ. Պետրոսյան «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի միջազգային փորձը» // «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» գիտական հանդես, #3, հուլիս-սեպտեմբեր, Երևան, 2018: ISSN 1829-2828, էջեր 192-197:
6. E. M. Sandoyan, H. G. Petrosyan «Abolishment of Profit Tax: Effects in the Republic of Armenia» // «ФИНАНСЫ: ТЕОРИЯ И ПРАКТИКА», Т. 23 (1), Москва, 2019 г. ISSN 2587-7089, стр. 47-56.

ПЕТРОСЯН ЕГИНЕ ГАГИКОВНА

ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ ВНЕДРЕНИЯ СИСТЕМЫ ВСЕОБЩЕГО ДЕКЛАРИРОВАНИЯ ИМУЩЕСТВА И ДОХОДОВ В РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – «Финансы, бухгалтерский учет».

Защита диссертации состоится 16-ого апреля 2019 года, в 14⁰⁰, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике, действующего при Российско-Армянском университете. Адрес: 0051, РА, г. Ереван, ул. Овсепя Эмина 123.

РЕЗЮМЕ

Эффективное функционирование системы налогообложения любой страны является залогом развития ее бизнес-среды. Каждая страна сама выбирает проводимую налоговую политику: с одной стороны, она не должна становиться бременем для граждан и организаций страны, с другой стороны, должна обеспечивать пополнение государственного бюджета, ведь для большинства стран основным источником государственных доходов являются именно налоги.

Система налогообложения Республики Армения прошла долгий путь до формирования нынешней, и является достаточно развитой и адаптированной к условиям рыночной экономики. Однако проблемы в налоговом администрировании, особенно, по части прямого налогообложения, являются одним из важнейших вызовов для системы налогообложения Армении, а наличие крупномасштабного неформального сектора еще больше влияет на эффективность функционирования системы и пополнения государственного бюджета. Одним из лучших инструментов администрирования прямых налогов является система декларирования доходов и имущества населения. Данная система внедрена и функционирует в большинстве развитых стран, таких как Великобритания, Дания, Германия, Финляндия, Эстония, США и др. Данная система доказала свою эффективность на практике и как инструмент для сбора налогов, и как инструмент по борьбе с коррупцией. Учитывая актуальность темы и на основании проведенного анализа международного опыта, в рамках диссертационного исследования предлагается внедрение системы всеобщего декларирования доходов и имущества в РА, снижающей административное бремя и приводящей к росту эффективности сбора прямых налогов.

Однако, модернизация системы прямого налогообложения в РА невозможна лишь с помощью системы декларирования. В этой связи в рамках диссертационного исследования тщательно изучены налоги на доходы в РА и других странах, представлен анализ и опыт внедрения налогообложения нераспределенной прибыли по нулевой ставке, а также отмены налога на прибыль и обложения распределенных дивидендов по ставкам подоходного налога и возможные макроэкономические изменения в РА в результате внедрения данных рекомендаций.

Настоящее исследование посвящено рассмотрению вышеуказанных проблем, разработке соответствующих мер и оценке их влияния на экономику РА, частный и общественный секторы, что обусловило выбор темы диссертационной работы, ее актуальность и необходимость ее изучения.

Объектом исследования является система прямого налогообложения в РА, а предметом исследования является внедрение системы всеобщего декларирования доходов и имущества населения, а также модернизация прямых налогов в РА.

Целью исследования является внедрение эффективно действующей системы всеобщего декларирования доходов и имущества населения в РА. Достижение поставленной цели определило основные задачи исследования:

- Выявить сущность и особенность системы декларирования доходов и имущества, а также эффективность ее функционирования.
- Изучить международный опыт системы декларирования доходов и имущества.
- Проанализировать особенности налога на прибыль и подоходного налога в РА и провести сравнительный анализ со странами ЕАЭС и ЕС.
- Представить сущность, принципы и методы оценки налогового разрыва (tax evasion).
- Оценить возможности расширения подоходного налога при допущении отсутствия теневого сектора.
- Проанализировать действующую систему декларирования доходов и имущества в РА, выявить ее недостатки.
- Представить методику расчёта административного бремени и выгод от регулирования и рассчитать с ее помощью затраты и выгоды для частного и общественного секторов РА от внедрения представленных рекомендаций.
- Рассчитать влияние изменений налога на прибыль на макроэкономические показатели РА.

К наиболее важным результатам исследования, содержащим научную новизну, относятся следующие пункты:

- ✓ Разработана концепция реформирования системы прямого налогообложения РА посредством внедрения всеобщего декларирования доходов и имущества, а также отмены налога на прибыль и модернизации подоходного налога.
- ✓ Выявлена возможность расширения налогооблагаемой базы по части подоходного налога населения РА за счет сокращения теневого сектора.
- ✓ Разработана и обоснована отмена налога на прибыль в РА, а также оценено влияние этого изменения на макроэкономические показатели с использованием неоклассической динамической модели общего равновесия.
- ✓ Разработаны и апробированы система всеобщего декларирования доходов и имущества населения РА, а также механизм оценки влияния внедрения данной системы на частный и общественный секторы с помощью предлагаемой методики оценки «административных затрат и выгод» («cost-benefit analysis»).

HEGHINE GAGIK PETROSYAN

THE PROBLEMS AND PROSPECTS OF MANDATORY INCOME AND ASSETS DECLARATION SYSTEM IN THE RA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – «Finance, Accounting».

The defense of the thesis will take place on 16th of April 2019, 14⁰⁰, at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian University: 123 H. Emin str., Yerevan, 0051.

ABSTRACT

Development of the business environment in a country requires an effectively functioning tax system. Each country implements its own taxation policy based on the characteristics of the economy: on the one hand it should not be a burden for society and businesses, on the other hand, it should provide revenues for the state since taxes are the primary source of the government budget.

In general, the taxation system of the Republic of Armenia is quite well developed and adapted to market economy. Nevertheless, not only the issues in tax administration, especially with respect to direct taxation, are one of the most important challenges in Armenia's current taxation system, but also high levels of the informal sector further affect the effectiveness of the system and hinder sufficient replenishment of the state budget.

To this extent, the income and assets declaration system is considered to be one of the best instruments for direct tax administration, and has already been introduced in many developed countries, such as the Great Britain, Denmark, Germany, Finland, Estonia, USA, etc. Its effectiveness has been proven both as a tool for tax collection, and as an anti-corruption tool. Taking into account the relevance of the thesis topic and based on the conducted analysis of the international experience, it is proposed to introduce a mandatory income and assets declaration system, which will facilitate and enhance the direct tax collection and minimize administrative costs.

However, modernization of the direct taxation system in RA solely through establishment and introduction of a mandatory income and assets declaration system is not achievable. Therefore, profit taxation system of RA and other countries, international experience of zero rate for undistributed profit tax system and its efficiency, profit tax and its macroeconomic effects on RA economy are also analyzed and evaluated within the framework of the dissertation thesis.

All the above-mentioned constitute the rationale for the choice of the dissertation topic, its relevance and importance of the current research. Hence, it is devoted to the study of the addressed issues, development of corresponding measures and assessment of their impact on RA economy at large, as well as private and public sectors.

The object of the research is the direct taxation system of RA. The subject of the thesis is implementation of mandatory income and assets declaration system of population and modernization of direct taxes in RA.

The purpose of the dissertation is introduction of an effective mandatory income and assets declaration system in RA. To achieve the goal, the following issues were put forward and solved in the study:

- To reveal the essence, main features and effectiveness of income and assets declaration system.
- To study the international practice of income and assets declaration system.
- To analyze profit tax and personal income tax systems in RA and carry out a comparative analysis of these taxes with EAEU and EU member states.
- To present the essence of tax evasion and methods, principles of its calculation.
- To evaluate the possible increase in the population income tax base by reducing shadow economy in RA.
- To analyze the current income and assets system in RA by identifying existing problems and their consequences.
- To present assessment of regulatory burden and benefits methodology and to conduct cost-benefit analysis for adoption of mandatory income and assets declaration system in private and public sectors in RA.
- To assess the possible impact of changes in profit taxation system on macroeconomic indicators of RA.

The most essential outcomes and **scientific novelties** of the study are summarized in the statements below:

- ✓ The concept of reforming direct taxation system of RA has been developed by introduction income and assets declaration system, abolition of profit tax and modernization of personal income tax.
- ✓ The possible increase in personal income tax base of RA population by reducing the shadow economy has been identified.
- ✓ The abolishment of profit tax in RA has been developed and justified, as well as the impact of that change on macroeconomic indicators has also been conducted using neoclassical dynamic general equilibrium model.
- ✓ Income and assets declaration system for RA population has been developed and tested by assessing regulatory burden and benefits for private and public sectors with impact assessment methodology.